ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐՏԻ ԽՈՍՔԸ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԹԱՂՄԱՆ ԱՌԹԻՎ (18 փետրվար 1984 թ.)

Սուգի մեջ է Հայաստանյայց Եկեղեցին, սուգի մեջ է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Այսօր վշտահար սրտով հողին ենք հանձնում մարմինը Մեր սիրեցյալ եղբոր՝ Տ. Սերովբե արքեպիսկոպոսի, որ անժամանակ ի Տեր հանգյավ իր նվիրական առաքելության ճանապարհին:

Խոնարհվում ենք Աստուծո կամքի առաջ, բայց և ծանրորեն տխուր է Մեր հոգին, որովհետև մեր Մայր Եկեղեցին կորցնում է իր շնորհաշատ մեկ սպասավորին, որ երեսուն տարիներից ի վեր օրինակելի հոգևոր նախանձախնդրությամբ, իմացական արթնությամբ ու հետևողական տոկուն կորովով, նաև երախտագիտությամբ ու հավատարմությամբ հայապաշտպան ֆրանսիական հայրենիքի հանդեպ, ղեկավարում էր Ֆրանսիայի հայոց թեմն ու Արևմտյան Եվրոպայի եկեղեցական համայնքները, իբրև ներշնչարան ու առաջնորդող ոգի ունենալով Քրիստոսի սուրբ Ավետարանը և մեծ Գիրքը հայոց հերոսական պատմության:

Մեծ Եղեռնի որբերից, Վասպուրական աշխարհի տեսիլքը իր սրտում ծրարած, նա պատանի տարիքում հայ Երուսաղեմում ուխտ կատարեց ծառայելու մեր նահատակված Եկեղեցուն ու ժողովրդին և մինչև իր կյանքի վերջին օրը աներեր հաստատ մնաց իր ուխտի վրա անշեղ նվիրումով: Սերովբե վարդապետ, ժրաջան միաբան Սրբոց Հակոբյանց միաբանության, կրթական տեսուչ, ապա հոգևոր հովիվ, ապա եպիսկոպոս և հայրապետական պատվիրակ, նա միշտ, ամեն տեղ, ավելի քան կես դար իր պարտքը յուրովսանն կատարեց, հավատարիմ մնալով իր հոգևոր կոչմանը, պատասխանատվության խոր գիտակցությամբ, իբրև հովիվ քաջ ու բարի, գնահատված, սիրված բոլորից:

Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյան հարապատ գործակիցն էր նաև Մայր Աթոռիս, իբրև անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի, որ Սուրբ Էջմիածին հաճախակի այցելություններով իր կարևոր մասնակցությունն էր բերում

մեր աշխատանքներին, իր օրինապահ կեցվածքով ու անաչառ մտորումներով: Մենք նրան գնահատում, հարգում և սիրում էինք իբրև հարազատ եղբոր, իբրև հավատավոր կղերականի, իբրև մտքով պայծառ մտավորականի, իբրև անպիշող պաշտպանի մեր Եկեղեցվո իրավանց ու ավանդությանց:

Սերովբե արքեպիսկոպոս, որ իր սրտի խորքում տևապես վառ էր պահպանել իր կորցրած Վասպուրական աշխարհի շունչը, իր հայրենատենչ հոգու ծարավը հագեցնում էր ամեն անգամ, երբ այցի էր գալիս Հայաստան, հրճվում ու մխիթարվում էր ի տես հայրենաշեն վերելքի ու մշակութային իրագործումների: Վերածնված հայրենիքի վեմի վրա ամուր կանգնած, Սերովբե սրբազանի համար հայոց ազգային դատի արդար լուծումը ոչ միայն երազանք էր, այլև հաստատ ստուգություն:

Եվ ահա այսպես, հանգուցյալը բաժանվում է մեզանից, բաժանվում է այս անցավոր աշխարհից ու անցնում մյուս ափը կյանքի, ափը հավերժական կյանքի:

Միածին Որդու Իշման Սուրբ Տաճարից և Մեր սրտից օրհնություն և լույս և հավիտենական հանգիստ Սերովբե սրբազան Մեր եղբոր քաղցր հոգվույն:

Եվ Մայր հայրենիքից մի խաչքար ու մի բուռ հող իր գերեզմանին:

«Քանզի ամենայն մարմին իբրև զխոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ և ծաղիկն թօթափեցաւ: Եւ Բան Տեառն մնայ յաւիտեան» (Ա Պետրոս Ա 24): Ամեն: